



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 113 Ը Կ «20» 06 2014թ

ԳԻՏԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵՊՀ աշխատողների կողմից գիտակրթական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման գործընթացը կանոնակարգելու նպատակով, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով.

հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. Սահմանել, որ.

ա. ԵՊՀ աշխատողները, 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված գիտակրթական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը պետք է մուտքագրեն intranet.ysu.am համակարգում՝ մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 31-ը:

բ. մինչև ընթացիկ տարվա հուլիսի 20-ը ԵՊՀ աշխատողները՝ ըստ կցված ձևաչափի (հավելված 1), ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն պետք է ներկայացնեն ներքոհիշյալ աշխատանքների (թղթային տարբերակով կամ էլեկտրոնային կրիչով) վերաբերյալ տեղեկատվություն.

- կազմակերպված գիտաժողովների, որտեղ ԵՊՀ-ն հանդես է եկել որպես կազմակերպիչ կամ համակազմակերպիչ,
- պաշտպանված ատենախոսության,
- պետական պարգևների և մրցանակների:

2. Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում իրականացված գիտակրթական գործունեության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելը ԵՊՀ աշխատողի պարտականությունն է: Այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում աշխատողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով իրազեկել ԵՊՀ բոլոր աշխատողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

1. գիտաժողովներ *

Հ/հ	Գիտաժողովի անվանումը	Գիտաժողովի անցկացման ժամկետները	Գիտաժողովի անցկացման վայրը	Գիտաժողովի տեսակը /միջազգային, հանրապետական/	Գիտաժողովի մասնակիցների ընդհանուր թիվը	Արտասահմանցի մասնակիցների թիվը	ԵՊՀ մասնակիցների թիվը	ՀՀ արտասահմանյալ արտասահմանյալների թիվ
1								
2								

*Կազմակերպված գիտաժողով, որտեղ ԵՊՀ-ն հանդես է գալիս որպես կազմակերպիչ կամ համակազմակերպիչ:

2. գիտական աստիճան

Հ/հ	Ատենախոս ազգանուն, անուն, հայրանուն	Շնորհված գիտական աստիճանը (թեկնածու, դոկտոր)	Ատենախոսություն թյան վերնագիրը	Շնորհված գիտական աստիճանի վկայագրի ամսաթիվը
1				

3. Պետական մրցանակներ և պարգևներ

Հ/հ	Մրցանակակիր ազգանուն, անուն, հայրանուն	Շնորհված մրցանակը	Մրցանակը շնորհելու տարին (2015/2016) և ամիսը